

լեզուն, այսպէս անիշխանութեան տակ ընկած է, մինչդեռ պաշտօնական գրութիւնը, պաշտօնական գրութեանց (պատրիարքարանի դիւանական գրութիւնը, ըսել կուզեմ, ուրիշ կերպ, Ընդհ. Ժողովոյ դիւանական գրութիւնը ուրիշ կերպ) անպաշտօն գրութիւնը անպաշտօն գրութեանց անհամաձայն են, անդին բուն Հայոց ազգը ներկայացնող մարմինը բնաւ Հայերէն լեզուն չը գիտեր, Հայերէն խօսիլ չը սիրեր, և Հայերէն լրագիր կարգաւ չախորժիր. (անցեալները մէկ քանի օր փորձ ըրինք Հայերէն յօդուածներ շատկէկ գրելու, և նպատակնիս էր թերթներս բոլորովին հայացնել. բայց նոյն իսկ Հայերը սկսան մեզ սպառնալ թէ՛ եթէ Տաճկերէն շատ չը գրես՝ Օրագիր չենք առնել, ըսել ուղեցին. մենք թէպէտ մկրտուած ու անթրիատ, մենք թէպէտ անուամբ Յակոբ, կամ Մարկոս ու ոչ Մէհմէտ կամ Հասան, բայց Տաճիկ ենք, ինչպէս են ոմանք, «Հայ—Հրո՞ում», մենք ալ ենք «Հայ—Տաճիկ», այս ըստ պառնալիքին առջև մեր գործին ելմտական վիճակը անսպառնալ մեզ կը պարտաւորէր կանգ առնել ու հոսանքին առջև իշնալ գէթ ժամանակ մը, ինչպէս ըրինք ալ)։ Այս է ահա մեր ազգութեան նշաններէն մէկուն վիճակը։

Գնեք պատմութեան. մեր ազգութեան այս մասը բնաւ գոհացուցիչ վիճակի մէջ չէ. դպրոցներու մէջ արդէն ազգային պատմութեան ուսումը անուանական վիճակի մէջ էր. յոյս մը ունէինք Շահ. Նուպար վարժարանի վերայ. հոն ալ ազգային պատմութեան ուսումը մասնաւորապէս դաստրուելու տեղ, կը լսենք թէ ընդհանուր պատմութեան մէջ խառնուած է վերջին կարգադրութեամբ մը։

Երդեօք ինչէն է որ՝ այսպէս միշտ յառաջ յառաջ պօռպոյժ ետ ետ կերթանք, Հայ ենք ըսելով իրական Հայութենէ կը խրտչինք, և ինչ որ օտար է՝ կը սիրենք ու կը քաջալերենք, և ինչ որ մերն է՝ կատենք ու կը վճատեցնենք։

Ասոր պատճառը կայ։

Ամեն ազգի մէջ երկու կարգ մարդիկ կը գընտւին. մէկ կարգն է գործողը, միւսն է հետեւողը. ասոնք իրենց կարգին մէջ ալ զանազան կարգերու

կը բաժնուին, բայց մեզ պէտք չէ այդ բաժանմանց մըտնել։

Մեր մէջ գործող, այսինքն ազգեցութեան տէր մասէն կը սեպուի մեր եկեղեցական դասը. այս դասը՝ իր մէջ պարունակելով իսկ խել մը անպիտաններ, իր շահը ազգին կամ ազգայնութեան մէջ փնտուելու կոչումն ունի. այլ է Արեւմտեան կղերին և այլ է մեր կղերին շահու աղբիւրը։ Արեւմտեան կղերը մէկ ազգի մը կապուած չէ, այլ նա ընդհանուր քրիստոնէութեան մէջ կը բնտուէ իր շահը. իսկ մերը միմիայն մեզ կապուած է. երբ Հայութիւնը մեռնի, Հայաստանայց եկեղեցին կը գոցուի. երբ այս եկեղեցին գոցուի, Հայոց եկեղեցականները կը մեռնին. արդ եթէ Հայութեան մեռնելէն՝ Հայոց եկեղեցականութիւնը կը մեռնի, մի՞թէ Հայոց եկեղեցականութեան մեռնելէն՝ Հայութիւնն ալ կը մեռնի.— ո՛չ, չը մեռնիր, եթէ Հայութիւնը ինքզինք պաշտպանելու պաշտօնեաներ կարենայ ունենալ, ինչպէս ունին ամեն քաղաքական անկախ ազգեր.— իսկ այո՛, կը մեռնի, եթէ Հայութիւնը ինքզինք պաշտպանելու պաշտօնեաներ ունենալու վիճակին չը հասած, գէթ իր անձնական շահուն համար զանի պաշտպանելու կոչում ունեցող եկեղեցական դասը մեռնի։

Ազգը այս վերջին ճշմարտութեանը վերահասու չըլլալով, հետեացաւ այն հեռատես քաղաքագիտաց լարած որոգայթին, որոնք Արեւմտեան կղերին տաղտկալի վարքը ու յետադէմ քաղաքականութիւնը միայնելով մեր եկեղեցականաց մէջ դռնուած անպիտաններուն վարքին ու անխորհուրդ ընթացքին, եկեղեցականութեան ազդեցութիւնը կտրեցին. ըսել է եկեղեցականութիւնը դուրս ձգելով ազգին գործող կարգէն, հետեւողաց կարգն անցուցին. բարոյապէս մեռուցին Հայութիւնը պաշտպանելու պաշտօնական կոչում ու անձնապէս շահ ունեցող մասը առանց տեղն ուրիշը կարգելու. ասով գոհ չեղան, պատրիարքութիւնն ու առաջնորդութիւնն ալ այս դասուն ձեռքէն առնել ուզողներ ալ գտնուեցան. ազգին մէջ այս փափաքին սիրահարողներ ալ գտնուեցան, բայց չը յաջողեցան. վասն զի շատ տհաս էր խորհուրդը և կնճռոտ էր ձեռնարկութիւնը, զի պէտք էր կայսերական հրովարտակներն ալ նո-

բողոքի, և այն ատեն բոլոր քրիստոնէից վրայ պէտք էր գործադրել այդ դրութիւնը. ուստի ետ կեցան. Աստիք միմէ Հայ չէին որ այսպէս խորհեցան ու այսպէս ըրին. — այո՛, Հայ էին, բայց Հայութենէ յուսահատ Հայեր էին. ուստի ուրիշ կողմ ուղղեցին իրենց կէտ նպատակին. մասնաւորութենէ ընդհանրութեան, Հայաստանի տէր ըլլալէ դադրելով՝ Տաճկաստանի տէր եղան, և իբրեւ Տաճկաստանի տէր անշուշտ մասնաւորութեանց մահը ուղեկու էին, մասն զի մէկ Հայրենիքը, ունենալու է մէկ լեզու, մէկ պատմութիւն, մէկ նպատակ, մէկ քաղաքականութիւն և մէկ պաշտօնէութիւն:

Եւ որն էր այս մէկը. — անշուշտ այս մէկն էր Օսմանեան Հայրենիքը, Օսմանեան լեզուն, Օսմանեան պատմութիւնը, Օսմանեան անկախութեան նպատակը, Օսմանեան քաղաքականութիւնը և Օսմանեան պաշտօնէութիւնը. ուստի այն որ մասնաւորութիւն էր, պէտք էր ջնջել և զամենքն ի մի ձուլել. Իսկիւստարի ճեմարանը մասնաւորութիւն էր. Հիւանդանոցի դպրոցը մասնաւորութիւն էր, Շահ. Նուպար վարժարանը մասնաւորութիւն է, Հայոց լեզուն մասնաւորութիւն է, Հայոց պատմութիւնը մասնաւորութիւն է, Հայոց եկեղեցականաց ազգեցութիւնը մասնաւորութիւն է, Հայոց զբարաւ լեզուն մասնաւորութիւն է, աշխարհաբար մասնաւորութիւն է, ազգային լրագրութիւնը մասնաւորութիւն է. ասոնք քաջայերել, բոտ այնմ քաղաքականութեան ընդհանուրին փնտսել է. մեծ սխալ — քաջայերէ դու մասնաւորութիւնը, զորացոյր զանի, այն ատեն զորաւոր մասնաւորներէ բաղկացեալ զորաւոր ընդհանրութիւն մը կունենաս. երբ կը դադրի հակառակութիւնը, այն ատեն կը հաստատուի միութիւնը. երբ կսկսի հակառակութիւնը, երբ կիմացուի լծնամութեան զաղտնի ողին, այն ատեն կսկսի զաղտնի լծնամութեան ողին, փոխադարձութեան օրէքը կարելի չէ բռնաբարել. թող . . . լեզուն արգիլէ, ասով է որ . . . աց լեզուն սրբազան պիտի բռնուի. թող ազգային պատմութեան աւանդութիւնն արգիլէ, անով է որ՝ սրբազան պատմութեան կը դառնայ ազգային պատմութիւնը:

Այս դարը ազգութեան դար է. այս դարուն հասնող ազգը չէ կարելի մեռցնել մինչև որ ինքը չուզէ մեռնիլ.

Մենք ենք որ մեր ազգութիւնը մեռցնելու ճամբան ձեռք առած ենք. ո՞վ կրնայ ուրեմն արգիլել մեր անձնասպանութիւնը:

Այս է ահա մեր արդի վիճակը. կրօնքին՝ անտարրերութիւն:

Վեկեղեցական հագուստով՝ ազգութեան պաշտօնեաներուս՝ ազգեցութեանը լծնամութիւն:

Լեզուներնէս մէկուն դամբանականը գրել. միւսին խառնակութիւն տալ. ազգային պատմութեան մասնաւոր դասը դարբեցնել:

Ո՛ր գործերնուս մէջ դռները ազգութեան հիմնական նշանը. բայց տակաւին բացազանջութեամբ Հայ ենք:

Օր—²էր Թ. 575. Փետր. 12

Մայրաքաղաքիս ռուսական ղեկավար Իկնաթիէ՛ք զօրապետը 50 օսմանեան ոսկի շնորհեց, ի նպատակ ազգային ազգատիկ վարժարանին Բերայի և յօրինակ այլոց:

Փետր. Թ. 656:

ԲԱԺԱՆՈՒՄՆ Ի ԲԱԺԱՆՄԱՆ

Արեւելեան Վաթիկիկ ազգայինք ուրբաթ օրը քուէարկութեամբ երեք կաթողիկոսական ընտրելի որոշելով, շարաթ առաւօտ Բերայի Ոսկերեան եկեղեցւոյն մէջ գումարուած եկեղեցական ժողովը՝ այն երեք ընտրելեաց մէջէն Պահտիարեան Յակոբ Գերապայծառը Վիլիկիոյ կաթողիկոս ընտրեց Պետրոս Թրդ անուամբ, և կիրակի առաւօտ ալ անունը յիշատակուիլ սկսաւ. Արեւելեան Վաթիկիկ Հայոց եկեղեցիներուն մէջ:

Իսկ Հասունեանք զարձեալ Վիլիկիոյ կաթողիկոս կը ծանաչեն զԳեր. Հասունեան, և զայն կը յիշատակեն:

Այսպէս ահա մեր Վաթիկիկ ազգայինք երկուքի բաժնուելով, մի և նոյն անգոյ ակթօին վրայ երկու կաթողիկոս կունենան իրարու հակաթօ, երկուքն ալ Պետրոս Թրդ անուամբ:

Մ—¹էր Թ. 1051. Փետր. 16

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆԻ

ՅՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՕԳԻ

Փետր. 12 — Գեր. Մկրտիչ Ա. Լալիսկոպոս Բաբամեանց կարգեցաւ Փոխ. — Թեմակալ Վ. իճակին Լեւեանայ:

,, 17 — Արժանապատիւ Ռաֆայէլ Վարդապետն նշանակեցաւ առժամանակեայ Վանահայր վանուցն Ս. Գեղարդայի տեղի Երթ. Միքայէլ Վարդապետի Չամոյեանց, որ գնաց յուխտ և յերկըրս պազութիւն տնօրինական Ս. տեղեացն Վրիստոսի յէրուսաղէմ: